

ուածները կը պառակտուին եւ իրարու դէմ կատաղի, մինչեւ խիստ արեւնահեղ պայքար կը մղեն, նոյն ուղղափառ անուղղելիները դարձեալ կ'ըսեն, թէ պատճառը դասակարգային գիտակցութեան պակասն է: Եւ այսպէս անվերջ: Դուրս կուզայ, որ ամէն տեղ գիտակցութիւնը կամ գիտակցութեան պակասն է որ բախտորոշ դեր կը կատարեն, թէեւ այդպէս ըսողները մեծ մասամբ պատմական նիւթապաշտութեան (մատերիալիզմի) մոլեռանդ հետեւողներ են:

Քաղաքականութեան մէջ դասակարգային տեսակէտի հիմնական թերութիւնը, իմ կարծիքով, այն է, որ կ'ենթադրուի, թէ դասակարգը ուրոյն ամբողջութիւն մըն է, որ իր առանձնայատուկ շահերով եւ ձգտումներով միանգամայն անհաշտելի թշնամի է միւս դասակարգերուն: Բաւական է ունենալ, կ'ենթադրուի, բանուորութեան շահերու պայծառ գիտակցութիւնը, որպէսզի բոլոր բանուորները անխտիր կանգնին մէկ դըրջակէ տակ եւ ձգտին պայքարի միջոցով իրագործելու իրենց դասակարգային խոչալները:

Սակայն դասակարգը եւ դասակարգային շահը ինքնին վերացական հասկացողութիւններ են, տեսարանական, միջոտաբանական դադափարներ, որոնք կրնան անգնահատելի ծառայութիւններ մատուցանել ընկերային, սնտեսական եւ քաղաքական ուսումնասիրութեանց համար, բայց գործնական կեանքի մէջ, քաղաքականութեան մէջ անոնց արժէքը եւ դերը յաճախ շատ խարտակի եւ կասկածելի են, մեծ մասամբ այն չեն, ինչ որ կը կարծուի իրենց մասին: Դասակարգը ինքնամփոփ, օրկանական միաւոր մը չէ, ինչպէս ազգութիւնը. դասակարգերը ազգութեանց նման բաժնուած չեն իրարմէ մեքենայպէս, որպէս զի կարենան դառնալ ուրոյն, անկախ եւ ինքնապարփակ շարժիչ ուժեր իրենց սեփական նպատակներով ու ձգտումներով: Չկայ եւ չի կարող լինել դասակարգային բնազդ, զգացում կամ գիտակցութիւն այն մտքով, ինչպէս որ գոյութիւն ունի ազգային բնազդ, զգացում եւ գիտակցութիւնը: Նիւթական շահը չի կարող երբեք լինել անհատներու միջեւ այնպիսի տեսական, ստեղծագործ եւ կենդանի օղակ մը, ինչպէս են, օրինակ, այն բազմ-

մասլիսի ու խորունկ կապերը, որոնք կը միացընեն անհատները մէկ ազգի մէջ: Նիւթական շահը գերազանցապէս անձնական աղբիւր եւ մղում ունի:

Տնտեսական կեանքին մէջ մարդկային գործունէութեան ղեկավարող ազգակը նեղ եւ անմիջական անձնական շահն է եւ ոչ դասակարգայինը, որ իրականին մէջ յաճախ կը հակասէ կամ չի ներգաշնակուէր անձնական շահին հետ: Ոչ միայն տարբեր ճիւղերու մէջ, այլ յաճախ միեւնոյն ճիւղին մէջ աշխատողները կը հակադրուին իրարու իրրեւ մրցակիցներ:

Մրցակցութիւնը տնտեսական կեանքի մէջ ընդհանուր երեւոյթ է: Ան տեղի կ'ունենայ ոչ միայն դասակարգերու, այլեւ անհատներու միջեւ: Ոչ թէ դասակարգային գիտակցութեան պակասն է, որ յաճախ կը մղէ անհատները պայքարելու ընկերային տեսակէտով բախտակից անհատներու կամ իմբակցութիւններու դէմ, այլ անձնական շահը, որ իր ստիպողական անմիջականութեամբ մեծ մասամբ կը լռեցնէ ամէն սկզբունք եւ վերացական գաղափար:

Ինչպէս բուրժուա դասակարգը, այնպէս այլ բանուորութիւնը, պրոլետարիատը, միաձոյլ եւ միապաղաղ զանդուած մը չէ, որ միշտ եւ ամէն տեղ միեւնոյն շահերը ներկայացնէ: Բանուորութիւնը եւս բաժնուած է ըստ արհեստի, աշխատավարձի, ապահովութեան կազմակերպութեան, վայրի, հմտութեան, կրօնի, ցեղի, ազգութեան, սեռի, տարիքի եւայլն, — յատկանիշներ, որոնք բոլորն այս աւելի կամ նուազ չափով տարբերութիւններ կը ստեղծեն բանուորներու վիճակի մէջ եւ առաջ կը բերեն տարբեր հոգեբանութիւն, տարբեր մղումներ, տարբեր խոչալներ:

Մենք տեսանք, թէ որքան հակամարտ, յաճախ անհաշտելի են տարբեր ազգութեանց կամ պետութեանց պատկանող բանուորներու շահերը եւ ձգտումները: Վերջին պատերազմը ամբողջ խորութեամբ հրապարակ բերաւ բանուորութեանց ազգամիջեան հակամարտութիւնները:

Նոյն պատերազմը սակայն եւ մանաւանդ վերջին եւրոպական յեղափոխութիւնները երեւան բերին խորը հակամարտութիւններ նա-